ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____ /Գ. Այվազյան/

«01» ---------- 09 ---------- 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հ 108 միջնակարգ դպրոց

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

I գ

Աննա Համազասպի Համազասպյան

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022 - 2023» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

2022 – 2023 ուս. տարում Iգ դասարանում սովորում է 32 աշակերտ՝ 16 տղա և 16 աղջիկ: Սովորողները իրար նկատմամբ ուշադիր են, համերաշխ, հարգալից ու հոգատար: Բոլորը սիրով են հաճախում դպրոց: Երեխաները աստիճանաբար հարմարվում եմ դպրոցի կարգ ու կանոնին: Բոլոր աշակերտների ընտանեկան և սոցիալական վիճակը բավարար է:

1. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

ա/ Ծանոթանալ դասարանի սովորողների կազմի հետ:

բ/ Աշակերտական կոլեկտիվի կազմակերպում և դաստիարակություն:

գ/ Բարձրացնել աշակերտի կարգապահությունը /օրվա ռեժիմ, վարքի կանոններ/:

դ/ Արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում և անցկացում:

ե/ Դաստիարակել հայրենասիրական ոգով:

զ/ Մշակել աշխատասիրության, ազնվության հմտություններ:

է/ Գիտակցական վերաբերմունք անձնական իրերի, գրենական պիտույքների, դպրոցի գույքի նկատմամբ:

ը/ Կազմակերպել էքսկուրսիա:

2. Հայեցի դաստիարակություն

2.1 - Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների մեջ սերմանել համեստություն, ազնվություն, ընկերասիրություն, հայրենասիրություն: Սերմանել հարգանք ցուցաբերել մեծերի նկատմամբ: Սիրել հայրենիքը, պաշտպանել թշնամուց: Ճանաչել հայրենիքի նվիրյալներին և շարունակել նրանց կիսատ գործը:

2.2 - Գեղագիտական դաստիարակություն

Երեխաների դաստիարակության կարևորագույն խնդիրներից մեկը գեղագիտական դաստիարակությունն է: Երաժշտությունը, աստվածը, նկարչությունը սիրելով երեխան հաղորդակից է դառնում բարու և գեղեցիկ աշխարհին:

2.3 - Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Դաստիարակել հայրենասիրության զգացում, զարգացնել հետաքրքրություն մեր հայրենիքի հերոսական անցյալի նկատմամբ: Սերմանել արժանապատվություն և անսահման սեր դեպի հայրենիքը:

2.4 - Ֆիզիկական դաստիարակություն

Ճիշտ կազմակերպել ֆիզիկական դաստիարակությունը և ապահովել նրանց ֆիզիկական աճն ու զարգացումը: Պահպանել անձնական հիգիենայի կանոնները, կոփել օրգանիզմը: Զարգացնել հմտություններ քայլքում, վազքում:

2.5 - Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտներին ընդգրկել հանրօգուտ գործունեության մեջ, վարժեցնել աշխատել համատեղ կոլեկտիվ կերպով: Դաստիարակել պատրաստակամություն, հարգանք մեծերի աշխատանքի նկատմամբ:

2.6 - Բնապահպանական դաստիարակություն

Ծանոթացնել շրջակա և բնությանը սպառնացող վտանգներին: Հետաքրքրություն առաջացնել բնության նկատմամբ: Օգնել աշակերտներին դառնալ բնականոն միջավայրի պահպանողն ու բարելավվողը, կազմակերպել էքսկուրսիա բնության գրկում:

2.7 - Դպրոց-ընտանիք կապը

Մշտական կապ պահպանել ընտանիքի հետ: Կազմակերպել կոլեկտիվ և անհատական ժողովներ: Ծնողներին ծանոթացնել դպրոցի պահանջների հետ: Նրանց ներգրավել ուսուցման և դաստիարակության գործին:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս. աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	Առաջին զանգի տոնակատարություն։ Գիտելիքի օր, դասագրքերի բաշխում։	1. 09. 22	Դասվար, աշակերտ
II	Ծանոթացում սովորողի օրվա ռեժիմին։ Ծնողական ժողով, ծնողական խորհրդի նախագահի ընտրություն։	08. 09. 22	Դասվար , աշակերտ
III	Ո՞վ է հետիոտնը	16. 09. 22	Դասվար , աշակերտ
IV	Անկախ Հայաստան, մեր հերոսները	22. 09. 22	Դասվար, աշակերտ
V	Ճանաչել մեր հայրենիքը	29. 09. 22	Դասվար , աշակերտ
VI	Գրադարանից օգտվելու կանոնները	06. 10. 22	Դասվար , աշակերտ
VII	Դաս՝ նվիրված Ա հնչյուն տառին	12. 10. 22	Դասվար, աշակերտ
VIII	Իմ ծննդավայրը	03. 11. 22	Դասվար , աշակերտ
IX	Մեր փողոցում	10. 11. 22	Դասվար , աշակերտ
X	Սա պետք է իմանան բոլորը	17. 11. 22	Դասվար, աշակերտ
XI	Մեր հավատարիմ բարեկամները (լուսացույց)	24. 11. 22	Դասվար , աշակերտ
XII	Բարով եկար, ձմե՛ռ	01. 12. 22	Դասվար , աշակերտ
XIII	Բնական աղետներ	07. 12. 22	Դասվար, աշակերտ
XIV	Ձմեռող թռչուններ	15. 12. 22	Դասվար , աշակերտ
XV	Ամանոր	22. 12. 22	Դասվար , աշակերտ
XVI	Բանակի օր	27. 01. 23	Դասվար, աշակերտ
XVII	Մենք ծանոթանում ենք ճանապարհային նշաններին	02. 02. 23	Դասվար , աշակերտ
XVIII	Որտեղ կարելի է խաղալ	09. 01. 23	Դասվար , աշակերտ
XIX	Տյառնընդառաջ	14. 02. 23	Դասվար, աշակերտ
XX	Մեր մայրենին։ Գրքերի աշխարհում	20. 02. 23	Դասվար , աշակերտ
XXI	Մայր իմ անուշ ու անգին	07. 03. 23	Դասվար , աշակերտ
XXII	Մենք ուղևորներ ենք	16. 03. 23	Դասվար, աշակերտ
XXIII	Բնության զարդոնք	06. 04. 23	Դասվար , աշակերտ
XXIV	Գարունը մեր բակում	13. 04. 23	Դասվար , աշակերտ
XXV	Սուրբ Զատիկ	17. 04. 23	Դասվար , աշակերտ
XXVI	Քաղաքամերձ ճանապարհին	27. 04. 23	Դասվար , աշակերտ

XXVII	Մեր հայրենիք սիրելի	04. 05. 23	Դասվար , աշակերտ
XXVIII	Սովորում ենք պահպանել երթևեկության կանոնները	11. 05. 23	Դասվար , աշակերտ
XXIX	Հրաժեշտ այբբենարանին	18. 05. 23	Դասվար, աշակերտ
XXX	Իմ սիրելի ամառ	25. 05. 23	Դասվար , աշակերտ
XXXI			
XXXII			
XXXIII			
XXXIV			

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը
12. 10. 22	Ա - հնչյուն տառին նվիրված միջոցառում	Դպրոց
22. 12. 22	Ամանորյա ուրախ դիմակահանդես	Դպրոց
20. 02. 23	Այցելություն Խ. Ապոր գրադարան	Դպրոց
07. 04. 23	Միջոցառում նվիրված մայրության և գեղեցկության տոնին	Դպրոց
18. 05. 23	Էքսկուրսիա դեպի Օշական։ Հրաժեշտ Այբբենարանին	Դպրոց

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	Միջոցառման բովանդակությունը	Ծանոթություն
01. 09. 22	Առաջին զանգի տոնակատարություն	Կատարված է
05. 10. 22	«Տոնդ շնորհավոր, ուսուցի՛չ»	
01. 11. 22	Փոքրիկ էքսկուրսիա դպրոցի տարածքում	
23. 12. 22	Ամանոր	
19. 02. 23	Գիրք նվիրելու օր	
17. 04. 23	Սուրբ Զատիկ	

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

Դասալսման օրը	Առարկան, դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը
16. 09. 2022	Ֆիզկուլտուրա, Ա. Հովհաննիսյան	Աջ, ձախ, հավասար, զգաստ	Ծանոթանալ ֆիզիկական պատրաստվածությանը
16. 09. 2022	Կերպարվեստ, Ա. Մալաքյան	Բանջարեղեններ	Ծանոթանալ կիրառվող մեթոդներին
19. 09. 22	Երգ	Իմ ուսուցիչ	Ծանոթանալ ձայնային տվյալներին

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
Հինգշաբթի	5-րդ		

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը	Ուսուցչի անուն, ազգանուն	ծանոթություն
09. 09. 22	Բաժանման տագնապ	Ինչպես դուրս բերել երեխային սթրեսային վիճակից	Աննա Համազասպյան	Կատարված է

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	ծանոթություն
08. 09. 2022	Կազմակերպչական հարցեր։ Ծնողխորհրդի ընտրություն	Ծանոթացում դպրոցական կարգուկանոնին։ Լինել պարտաճանաչ և հետևողական։	Կատարված է
23. 12. 22	Առաջին կիսամյակի ամփոփում, երկրորդ կիսամյակի անելիքները	Աշակերտների առաջադիմությունը առաջին կիսամյակի ընթացքում	
10. 03. 23	Ընդլայնել երեխաների հետաքրքրությունների շրջանակը	Զրույց՝ ինչպես և ինչ միջոցներով հետաքրքրություն առաջացնել երեխաների մեջ բնության նկատմամբ	
23. 05. 23	Ուսումնական տարվա աշխատանքների ամփոփում	Ամփոփել ուսումնական տարվա աշխատանքները	

Դասղեկ՝_____ _Ա. Համազասպյան_